ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

«ՀՀ-ԲԾ-ԳՀԱՊՁԲ-18/29» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի

ք. Երևան « 15 » մայիսի 2018թ.

Ժամը՝ **11** ^{00}

Մասնակցում էին՝

Գնման Պատասխանատու /Գնահատման աշխատակազմի պատասխանատու (**ԳՊ/ԳԱՊ**) Մ. Թովմասյան

Գնման Պատասխանատու /Գնահատման աշխատակազմ (**ԳՊ/ԳԱ**) Գ. Միրզոյան, Վ. Թովմասյան

Գնման Պատասխանատու /Բացման աշխատակազմ (**ԳՊ/ԲԱ**) Ս. Անանյան, Կ. Բզնունի

Գնման Պատասխանատու/Մրցույթի համակարգող (**ԳՊ/ՄՀմ**) Հ.Վարդանյան

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

1.1. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացված հարցման և ստացված տեղեկատվության վերաբերյալ տեղեկություններ,

1.2. Առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ապրանքների ամբողջական նկարագրերի ներկայացման վերաբերյալ տեղեկություններ,

1.3. Հանձնաժողովի ընդունած որոշումները:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացված հարցման և ստացված տեղեկատվության վերաբերյալ տեղեկություններ

Ընդունել ի գիտություն:

Հանձնաժողովի քարտուղարի կողմից սույն թվականի մայիսի 7-ին, ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի № 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ), 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն հարցում է ուղարկվել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից սահմանված ժամկետում անհրաժեշտ տեղեկատվությունը չի տրամադրվել: Կարգի 44-րդ կետի համաձայն մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող:

3. Առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից ապրանքների ամբողջական նկարագրերի ներկայացման վերաբերյալ տեղեկություններ

Ընդունել ի գիտություն:

Հանձնաժողովի քարտուղարը սույն թվականի մայիսի 5-ին, Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն, ծանուցել է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով հրավերով սահմանված կարգով և ժամկետում ներկայացնել ապրանքների ամբողջական նկարագրերի վերաբերյալ տեղեկությունները:

Առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետում ներկայացրել է անհրաժեշտ փաստաթղթերը:.

4. Հանձնաժողովի ընդունած որոշումները

Հանձնաժողովը որոշեց.

4.1. Հանձնաժողովի գնահատող անդամների կողմից իրականացված գնահատումների հիման վրա ՀՀ-ԲԾ-ԳՀԱՊՁԲ-18/29 ծածկագրով գնման ընթացակարգի 3-րդ և 5-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից ճանաչել «Կոմպասս» ՍՊԸ-ին,

4.2. Հաստատել պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության տեքստը,

4.3. Հանձնաժողովի քարտուղարին.

Պայմանագրի կնքման նպատակով, անգործության ժամկետի ավարտից հետո, «Կոմպասս» ՍՊԸ-ին ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ, պայմանագրի նախագիծը և պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջ՝ միակողմանի հաստատված հայտարարություն և վճարման պահանջագիր՝ կնքվելիք պայմանագրի գնի 10 տոկոսի չափով:

5. Նիստին ներկա հանձնաժողովի անդամների և քարտուղարի հավաստումը ընդունված որոշումներին

Գնման Պատասխանատու /Գնահատման աշխատակազմի պատասխանատու (**ԳՊ/ԳԱՊ**) _____ Մ. Թովմասյան

Գնման Պատասխանատու /Գնահատման աշխատակազմ (**ԳՊ/ԳԱ**) _____ Գ. Միրզոյան

Գնման Պատասխանատու /Գնահատման աշխատակազմ (**ԳՊ/ԳԱ**) _____ Վ. Թովմասյան

Գնման Պատասխանատու /Բացման աշխատակազմ (**ԳՊ/ԲԱ**) _____ Ս. Անանյան

Գնման Պատասխանատու /Բացման աշխատակազմ (**ԳՊ/ԲԱ**) _____ Կ. Բզնունի

Գնման Պատասխանատու /Մրցույթի համակարգող (**ԳՊ/ՄՀմ**) _____ Հ.Վարդանյան